

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1946 ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ ԹԻՒ 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ էջ

Հ. Մ. Շ. - «Բազմավէպ» իր ընթերցողներուն. Նոր կեանքի սեմին վրայ . . . 1

ՊԱՏՄԱԿԱՆ
Հ. Մ. Ճանաչեան. - Ակնարկ մը արաբական շրջանին Հայաստանի մէջ . . . 4
Հ. Յ. Թորոսեան. - Վենետիկ . . . 15

ԳՐԱԿԱՆ
Արսէն-Երկաթ. - Դարեր առաջ . . . 14
Հ. Վ. Յովհաննէսեան. - Փոքրիկ ամպը . . . 24
» Լքուած բուրվառը . . . 37
» Մեղձ խօսեցէք . . . 44
Արամայիս Արապեան. - Պօսք առ Վենետիկ . . . 25
» Լիտուի ակերտն . . . 25
Հ. Մ. Շ. - Բնութեան հետ (վերապրումներ) . . . 38

ԳԻՏԱԿԱՆ
Տոք. Սերոբէ Եղիկեան. - Հիւլէական ուժը . . . 26

ԳՐԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԱՆ (Գրախօսականներ)
Հ. Մ. Շ. - Շրջիկ. «Մաղկէ ծաղիկ». Նոթեր Արճէշ քաղաքէն, Պուրէշ 1942 . . . 45
» Յ. Բիւրտեան. «Թորոս Տարօնեցի» Նիւ-Եորք. 1943 . . . 47

SOMMAIRE

1946 Janvier - Février N. 1-2

PAG.

ARTICLE DE FOND
Réd. — Pazmaveb à ses lecteurs sur le seuil de la vie nouvelle . . . 1

HISTORIQUE
P. M. Dj. — Un coup d'oeil sur la période arabe dans l'histoire d'Arménie . . . 4
P. J. Thorossian. — Venise . . . 15

LITTÉRAIRE
Arsène Yergath. — Des siècles avant . . . 14
P. V. Hovhannessian. — Le petit nuage . . . 24
» *L'encensoir abandonné* . . . 37
» *Parlez doucement* . . . 44
Aramaïs Serabian. — Paroles à la mer de Venise . . . 25
» *A la plage de Lido* . . . 25
P. M. Dj. — Dans la nature (Réflexion) . . . 38

SCIENTIFIQUE
Doct. Séropé Erighian. — La bombe atomique . . . 26

RECENSIONS
P. M. Dj. — «De fleurs en fleurs» écrit par Chertchigh. éd. Bucarest, 1942 . . . 45
» «Thoros de Taron» écrit par H. Kurdian, éd. New-York, 1943 . . . 47

1843-1946

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ ԹԻՒ 1-2

ՀԱՏ. ՃԴ. ՌԵՂ. Ե. ՌԵՂ. Զ. 000

ՏԱՐԻ 104-ԲԷ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԲԱԶՄԱՎԷՊ ԻՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՍԵՄԻՆ ՎՐԱՅ

Նոր կեանք մը արթնցած է ամէնուրեք, յետ ուսման որոտումին եւ սուրբնու շաչիւնին: Հայ «Փիւնիկ»ը, այն անխորտակելի հաւատով որ իրենն է, դարձեալ կը յառնէ իր մոխիրներէն՝ ի անգուսպ տենչանքով մը դէպի նոր կեանք, դէպի աշխատանք եւ դէպի վերելք:

«Բազմավէպ» կ'ողջունէ այդ կեանքի բողբոջումը ազգային գործունէութեան ամէն մարգերու մէջ. մեզի համոզ այն սակաւաբիւ բերքերը եւ հրատարակութիւններն արդէն ապացոյց են մեր ազգին եգալան կենսունակութեան:

«Բազմավէպ»ն ալ յետ իր դարաւոր կեանքին, ահա այս չորրորդ տարին է որ կը շարունակէ իր առաքելութիւնը՝ չդադրելով երբեք նոյնիսկ պատերազմի ամէնէն սաւառ ու խիստ ապրումներու շրջանին: Այս օր արիւնագանգ մարդկութեան մը վերեւ ծագած է հուսկ խաղաղութեան արեւը՝ բանալով նոր հորիզոններ. բայց կը զգանք թէ այս մարդկութիւնը հանգչած չէ բոլորովին, արիւնի կարմիր հետեր կ'ընդունը մարտին տակաւին այդ ողջունումը կանանչ արեւուն մէջէն: Սակայն միւս կողմէն կեանքի տենչանքը բնագոյրէն կը մղէ գործի. կը մշակուին բոլոր ժողովուրդներու բով ծրագիրներ ընկերային, գրական, եկեղեցական, կրթական ասպարէզներու համար: Անշուշտ Աստուած, ուրուն ձեռքն է վերջնական խաղաղութիւնը, պիտի գրայ մարդկութեան

վրայ եւ բաւական պիտի համարի անոր այնքան անլուր տառապանքները:

Ու ի՛նչպէս չյիշել հոս այն գոհերը որ մենք իսկ ունեցանք. ո՛րքան ծաղիկ հասակ ինկաւ Թառամեցաւ անգիտակցաբար: Եւ քանի՞նք անոնցմէ, նուիրուած գեղարուեստի ու գրականութեան, դեռ իրենց ապագան չկերտած, կամ իրենց հունը չգտած, ի սպառ անհետացան ապարէզէն: Աստի կորուստներ չե՞ն մեզի համար, մեզի՝ որ այնքան փոքր ենք Թուով, հազիւ ամբ մը աւագ տիեզերածառալ աւագութիւն դիմաց համաշխարհային բազմութեան: — Այս է տխուր իրականութիւնը. եւ եթէ պահ մը մէկդի քողունք այն միամիտ լաւատեսութիւնները որով կ'արտայայտուին մեր լրագիրները, կրնանք հարցնել մենք մեզի քէ ո՞վ է որ արդարապէս նկատի պիտի առնէ եւ հատուցանէ փոխարէնն այս մեր գոհողութիւններուն: Կայ անտարակոյս ազգային վերածնունդի մը միտքարական յոյսը. յոյս մը՝ ծլած մեր դարաւոր աղէտներու, մեր արիւնի ու արցունքի լինի ծոցէն, արդար յոյսը եւ ակընկալութիւնը, զոր ոչ մէկ ազգ կրնայ արգիլել մեզի. մենք ալ ազգ մ'ենք, մենք ալ ունեցած ենք հին ազգային կեանք, աւանդութիւն, պատմութիւն, մենք ալ հետեւաբար իրաւունք ունինք ապրելու արեւուն տակ՝ առանց դպչելու ուրիշ իրաւունքներուն, բայց նաեւ պահանջելով որ ուրիշներ ալ մեզ յարգեն, նանչնան մեր արդար իրաւունքը:

Հարկաւոր է սակայն ունենալ քաղաքական մեծ խոհեմութիւն մեր ազգային ակնկալութիւնները իրականացնելու այս ճիգին մէջ. խանդավառութիւնը օղային դղեակներ միայն կը կառուցանէ, անդիւսնագէտ յանդգնութիւնները՝ յուսալսաբութիւններ եւ միայն կործանում կը պատառտեն, ինչպէս անցեալի մէջ պատահեցաւ աղետալիօրէն: Կը պահանջուի ընդհանրական գգուշաւորութիւն, չափաւորութիւն, եւ պաղաւթիւն գործունէութիւն, առանց գրգռելու ոգիները, առանց քշնամիներ յարուցանելու մեր շուրջը անիմաստ կերպով:

Մինչեւ այսօր ապրած ենք շնորհիւ մեր ազգային ոգւոյն, կորովին, եւ շնորհիւ այն լեզուին եւ մշակոյթին, զոր կը պարտինք մեր փառապանծ Նախնիներուն, ու նա մանաւանդ շնորհիւ մեր կրօնին: Անշուշտ կրօնքը մեծագոյն ազդակն է, որով մեր ազգը դիմադրեց այնքան փոքրիկներու, այնքան հալածանքներու, պայքարեցաւ ձուլումին դէմ՝ օտար ոչ քրիստոնէայ տարրերուն հետ՝ արեւելի մէջ: Սակայն պարագան փոխուեցաւ երբ հայ ժողովուրդը անցաւ գաղթական դէպի եւրոպական ոստանները, Ամերիկա եւ այլուր, մէկ խօսքով հոն՝ ուր մեզ շրջապատող տարրերը կամ ժողովուրդները գերազանց մեզմէ իրենց քա-

ղաքակրթութեամբ, դարձան միանգամայն յայտնի սպառնալիք մեր ազգային գոյնի կորուստին: Այդ միջավայրերուն մէջ հետեւաբար, եթէ հայը՝ պահելով հանդերձ իր եկեղեցական կեանքը իր բնիկ ու ազգային ծէսին մէջ իբր անհրաժեշտ պայման, չկառչի իր լեզուին, իր մշակոյթին, իր պատմութեան՝ ձուլումը անխուսափելի սպառնալիք մըն է անտարակոյս անհետ բնաջնջումի:

Ուրախ ենք ստուգիւ տեսնելով եւ լսելով որ հայկական գաղութներու մէջ ամէնուրեք, այն տեղ ուր նոյնիսկ բուռ մը հայեր կան խըմբուած սեղանի մը շուրջ, իսկոյն ձեռնարկուած է պատերազմէ վերջ բուռած սեղանի մը շուրջ, իսկոյն ձեռնարկուած է պատերազմէ վերջ կազմակերպելու գաղութահայ կեանքը, իր եկեղեցիով, ազգային մշակութային կեանքով, որ դաստիարակութեան շուրջ օգտակար դասախօսութիւններով, ջերմացնելու այդ կեանքը հանդէսներով, կորով ու միութիւն տալու վարչական Մարմինով մը, որ միանգամայն ներկայացուցիչն է գաղութին՝ իւրաքանչիւր ազգին կամ պետութեան ծոցը՝ ուր գացած է տուն եւ գործ փնտռելու:

Այդ վերաբժարձ կեանքին նպաստելու համար վերստին ռոփի վրայ է ահա «Բագմավէպ»ը իր բանասիրական, մատենագրական, պատմական, գրական, կրթական ու բարոյական յօդուածներով, եւ պահելով հանդերձ իր լուրջ գիտական նկարագիրը կը ձգտի օգտակար ըլլալ նաեւ հայ գրասէր երիտասարդութեան, հայ ընտանիքներու եւ անհատներու՝ մեր ձեցնելով ժողովուրդին՝ հայկական ուսումներու մէջ կատարուած նուաճումները եւ եւրոպական գրականութեան ու մշակոյթի ծանօթութիւնը:

ԽՄԲ.



5438-4-2.